Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի «Ներդրումային ծրագրի շրջանակներում «Ավալանժ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» N 186-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) հավելվածը 13-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14-րդ և 15-րդ կետերով.

«	14.	0602	Վարդեր՝ պատվաստված կամ չպատվաստված	հատ	7065	Նիդերլանդներ/ Նիդերլանդներ	6 813 173
	15.	0602	Վարդեր՝ պատվաստված կամ չպատվաստված	հատ	5000	Գերմանիա/ Գերմանիա	4 969 152

».

2) հավելվածի «Ընդամենը» պարբերության մեջ «47 518 846» թիվը փոխարինել «59 301 171» թվով: